

րական գորգը»⁽¹⁸⁾ : Այլուր նոյնիսկ կը վկայուի որ Վանայ եւ շրջակայքի մահմետական հպատակեալ իշխանները կը համբուրեն Թիմուրի «կայսերական գորգը»⁽¹⁹⁾ : Թիմուրի արքունեաց մէջ կար նաեւ «զահոյց գորգ»⁽²⁰⁾ :

Պատիւի համար գորգ սփռելու սովորութիւնը հետզհետէ տարածուեցաւ աշխարհիս չորս կողմը : Նախ Վենետիկ եւ Սպանիա, յետոյ Եւրոպական եւ անկից ալ Ամերիկեան երկիրները, նոյնիսկ Միացեալ Նահանգները, ուր ի յարգանս նշանաւոր անձերու՝ գորգ կամ գորգեր կը սփռուին : Խիստ նշանակալից է սա պարագան՝ որ Եւրոպական հին նկարչական դուրսգործոցներու մէջ Աստուածամայրը յաճախ կը ներկայացուի՝ ընդհանրապէս արեւելեան գորգի մը վրայ բազմած : Մեծ հանդէսներու եւ ընդունելութեանց ատեն պատշաճները, ճամբաները գորգներով զարդարուած կ'ըլլային : Ատոնցմէ նմոյշներ կը ներկայացընեմ հոս :

Այս մասը փակելէ առաջ հոս կու տամ յետին դարերէն վկայութիւն մը, 1637 թուականին երբ Adam Olearius Պարսից արքունիքը կ'ընդունուի՝ կը նկատէ որ «Մեծամեծները Իշխանը (արքայազուն Շահ Աէֆին) արքունի պալատ առաջնորդեցին, ուր զինքը տեղաւորեցին Տիվան-Խանէի վրայ, քարէ սեղան մը, որուն վրայ կային այնքան թիւով գորգեր՝ որքան որ իր ցեղէն Պարսիկ թագաւորներ եղած էին : Այս գորգերը կը կոչուէին Խալիէյը Ատալէդ (Kalitse Ahdalet), կամ Արդարութեան գորգեր, որմէ ամէն նորընտիր թագաւոր գահ բարձրանալուն առթիւ հատ մը շինել կու տայ»⁽²¹⁾ : Նման սովորութիւն մը այլուստ ինձի անձանօթ կը մնայ, բացի Հաղարումէկ Գիւրերներու պատմուածքներէն :

ԳՈՐԳԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԼԱՅ ՄԵԾԱՏԱՆՅ ՔՈՎ

Որքան որ իրաւ է թէ «երկար տարիներ ծանր աշխատանքով արտադրուած գորգերը սահմանուած էին արքայական պալատների եւ

(18) Անդ, էջ 212, 290, 302, 347 :

(19) Անդ, էջ 287, 284 :

(20) Անդ, էջ 213, 214, 224, 272 :

(21) Voyages and Travels. — London, 1662, էջ 356-7: Հայոց մօտ ալ դատի ատեն թագաւորը նստած կը գտնենք գորգի վրայ : Լեւոն Գի այնքան լաւ ծանօթ «զատաստան» ներկայացնող մանրանկարը ցոյց կու տայ կիլիկիոյ այդ մեծանուն Հայ թագաւորը, բոտ արեւելեան սովորութեան, գորգի վրայ նստած :

Անդլիերէնի մէջ կայ ասացուած մը to be on the carpet (գորգի վրայ ըլլալ), կը նշանակէ նկատողութեան տակ գտնուիլ, քննութեան ենթակայ ըլլալ, աչքի տակ գտնուիլ :

Հետաքրքրական է ուրիշ կոչում մը՝ Carpet Knight (Գորգի Ասպետ), որ Եէյքարիք ալ գործածած է, եւ որուն իմաստն է Ասպետ մը՝ որ հանդիստ եւ սպահնապետները կը վայելէ, փարթամ, որ պատերազմի դաշտի նեղութիւնները չէ ճանչցած : Կամ թէ մէկը՝ որ ասպետացած է գինուորական արժանիքէ տարրեր պատճառաւ :